



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌԻ ԽԱՐԶ  
ՀԱՂՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ փոստ haghpat.lori@mta.gov.am  
հեռ.-0-253-6-01-02

ՀԳ - 156  
<<06>> դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ  
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգարժան մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Հաղպատ համայնքի ավագանու 30.11.2016թ-ի թիվ  
29-38 որոշումները:  
Առդիր՝ 32 թերթ



Համայնքի ղեկավար՝  Վ. Քառոյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«30» նոյեմբերի 2016թ. թիվ 29-Ա

**ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել Հաղպատ համայնքի ավագանու 2016թ-ի նոյեմբերի 30-ի նիստի օրակարգը.

1. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.11.2016Թ-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՉՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՈՏԱՎԱՐՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՏ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՐԱՋԱՏ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
9. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
10. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.			
2	Բարսյան Արման Հ.			
3	Բեժանյան Ավետիք Ա.			
4	Մեջլումյան Արթուր Ս.			
5	Վարդյան Վալերի Կ.			



Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 30-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ  
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Հաղպատ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (Տ)	Դեմ (Թ)	Ձեռնպահ(Թ)
1	Ալիխանյան Աշոտ Ս.	<i>[Signature]</i>		
2	Բաբայան Արման Հ.	<i>[Signature]</i>		
3	Բեժանյան Ավետիք Ա.	<i>[Signature]</i>		
4	Մեջրումյան Արթուր Ս.	<i>[Signature]</i>		
5	Վարդյան Վալերի Կ.	<i>[Signature]</i>		

Համայնքի ղեկավար՝ *[Signature]* Վ. Բառյան



Կ.Տ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017  
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3 000 /երեք հազար/ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 4 000 /չորս հազար/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 2 000 /երկու հազար/ դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, սպա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, սպա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 4 000 /չորս հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ողելից և ավելի քան իմիջի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 /հինգ հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 /վեց հազար/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 /ութե հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տասը հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 /հիսուն հազար/ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 /հինգ հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 /վեց հազար/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8000 /ութե հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տասը հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 /հիսուն հազար/ դրամ:

#### 5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 /երկու հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 40 000 /քառասուն հազար/ դրամ.

զա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 /չորս հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 /վեց հազար/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 /քսան հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 /մեկ հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 /երկու հազար/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4000 /չորս հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000 /ութ հազար/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 20000 /քսան հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ավտոմոբիլային սպիտակ պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

բ) թունդ ավտոմոբիլային (սպիտակ պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 100 /մեկ հարյուր/ դրամ:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 50 /հիսուն/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 3000 /երեք հազար/ դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50000 /հիսուն հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան համար սահմանել՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

14. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 2000 /երկու հազար/ դրամ:

ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԲԱՌՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 31-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԿՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ  
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով՝

Հաղպատ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ համայնքում 2017 թ-ի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (Ծ)	Դեմ (Թ)	Ձեռնպահ(Յ)
1	Ալիխանյան Աշոտ Ս.			
2	Բաբայան Արման Հ.			
3	Բեժանյան Ավետիք Ա.			
4	Մեջլումյան Արթուր Ս.			
5	Վարոսյան Վալերի Կ.			

Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017  
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ  
ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1. Ոռոգման ջրի վարձավճարը սահմանել՝
  - 1) մայիսից մինչև հոկտեմբեր ամիսներին՝  
0-500 քմ – 300 /երեք հարյուր/ դրամ  
500-1000 քմ – 500 /հինգ հարյուր/ դրամ  
  
1000-2000 քմ – 1000 /մեկ հազար/ դրամ  
  
2000-3000 քմ - 1200 /մեկ հազար երկու հարյուր/ դրամ
  - 2) հունվարից մինչև ապրիլ և նոյեմբերից մինչև դեկտեմբեր ամիսներին վարձավճարը սահմանել 1 շնչին ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ
2. Մանկապարտեզ հաճախող երեխաների վարձավճարը սահմանել 1 երեխայի համար ամսական 5000 / հինգ հազար/ դրամ
3. Աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար ընթացիկ տարվա համար սահմանել ամսական 1 շնչին 100 /մեկ հարյուր/ դրամ:
4. <<Բելառուս>> մակնիշի տրակտորի կողմից կատարված 1 հա խոտհավաքի վարձավճարը սահմանել 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ:

Հաղպատ համայնքի ղեկավար



Վ. Քառոյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 32-Ս

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՄԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ  
ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

*Թույլատրել*

- 06-060-0231-0001 ծածկագրից 0,003 հա գյուղ. այլ հողատեսքը օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 7000 դրամ:
- 06-060-0223-0025 ծածկագրից 0,1124 հա գյուղ. նշանակության հողատեսքը օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 250 000 դրամ:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.	<i>[Signature]</i>		
2	Բաբայան Արման Հ.	<i>[Signature]</i>		
3	Բեժանյան Ավետիք Ա.	<i>[Signature]</i>		
4	Մեջրումյան Արթուր Ս.	<i>[Signature]</i>		
5	Վարդայան Վալերի Կ.	<i>[Signature]</i>		



Համայնքի ղեկավար՝ *[Signature]* Վ. Բաղդասարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 33-Ս

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ  
ՀԱՏՎԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ ԱՐՈՏԱՎԱՐՁ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով,

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

- Սահմանել հողամասերը վարձակալությամբ տրամադրելու համար վարձավճարներ՝ հետևյալ չափով.  
1 հա վարելահողը վարձակալությամբ տրամադրելու համար սահմանել 10 000 ՀՀ դրամ:  
1 հա խոտհարքը վարձակալությամբ հատկացնելու համար սահմանել 3 200 ՀՀ դրամ:  
1 հա արոտը վարձակալությամբ հատկացնելու համար սահմանել 2300 դրամ:
- 1 գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար սահմանել 1500 ՀՀ դրամ արոտավարձ.

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.	<i>[Signature]</i>		
2	Բարսյան Արման Հ.	<i>[Signature]</i>		
3	Բեժանյան Ավետիք Ա.	<i>[Signature]</i>		
4	Մեջրումյան Արթուր Ս.	<i>[Signature]</i>		
5	Վարոսյան Վալերի Կ.	<i>[Signature]</i>		

Համայնքի ղեկավար *[Signature]* Վ. Քառյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 34-Ս

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հաղպատ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 35-Ս որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.	<i>[Signature]</i>		
2	Բաբայան Արման Հ.	<i>[Signature]</i>		
3	Բեժանյան Ավետիք Ա.	<i>[Signature]</i>		
4	Մեջլումյան Արթուր Ս.	<i>[Signature]</i>		
5	Վարդյան Վալերի Կ.	<i>[Signature]</i>		



Համայնքի ղեկավար՝ *[Signature]* Վ. Քառյան

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԻ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

Մաթոսյան Վերիչկա 20 000 դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 20 000 /քան հազար/ դրամ

Հաղպատ համայնքի աշխատակազմի

քարտուղար՝



Լ. Մեծրաբյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 35-Ա

**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՐԱԶԱՏ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ  
ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հաղպատ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 35-Ա որոշման 16-րդ կետով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

Մուշեղ Ավետիքի Բեժանյանի մահվան 20 000 դրամ գումարը հատկացնել նրա կնոջը՝ Մուսաննա Արեստակի Բաբայանին:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Այիխանյան Աշոտ Ս.	<i>[Signature]</i>		
2	Բաբայան Արման Հ.	<i>[Signature]</i>		
3	Բեժանյան Ավետիք Ա.	<i>[Signature]</i>		
4	Մեջլումյան Արթուր Ս.	<i>[Signature]</i>		
5	Վարդայան Վալերի Վ.	<i>[Signature]</i>		



Համայնքի ղեկավար՝ *[Signature]* Վ. Բառյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՂԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ [haghpat.lori@mta.gov.am](mailto:haghpat.lori@mta.gov.am)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 36-Ս

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թ-ի հունիսի 22-ի թիվ 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2011 թ-ի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշմամբ՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

- Ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով՝ հետևյալ կազմով.  
Մաթոսյան Սուրեն Վոլոդյայի - հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավարի տեղակալ  
Իսրայելյան Լուսինե Վահանի - հանձնաժողովի քարտուղար, սոց. աշխատող  
Շամբարյան Ռոզա Աշոտի - հանձնաժ. անդամ, բուժքույր  
Մեհրաբյան Լուիզա Արեստակի - հանձնաժ անդամ, աշխատակազմի քարտուղար  
Մեջլումյան Միրամարգ Սանդրոյի - հանձնաժ անդամ, մանկավարժ  
Վարդյան Վալերի Կորյունի - հանձնաժ անդամ, ավագանու անդամ  
Կյանքի ղեկավարին իրավիճակներում հայտնված երեխաների հաշվառման աշխատանքների պատասխանատու նշանակել Լուսինե Իսրայելյանին:
- Ուժը կորցրած ճանաչել Հաղպատ համայնքի ավագանու 19.12.2013թ-ի թիվ 49-Ս որոշումը:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.	<i>[Signature]</i>		
2	Բարսյան Արման Հ.	<i>[Signature]</i>		
3	Բեժանյան Ավետիք Ա.	<i>[Signature]</i>		
4	Մեջլումյան Արթուր Ս.	<i>[Signature]</i>		
5	Վարդյան Վալերի Կ.	<i>[Signature]</i>		

Համայնքի ղեկավար՝ *[Signature]* Վ. Բաղդասարյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 37-Ս

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ 4-Դ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2016 թվականի 4-րդ եռամսյակում Հաղպատ համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:
3. Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ (5)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
1	Ալիխանյան Աշոտ Ս.			
2	Բաբայան Արման Հ.			
3	Բեժանյան Ավետիք Ա.			
4	Մեջլումյան Արթուր Ս.			
5	Վարոսյան Վալերի Կ.			



Համայնքի ղեկավար՝ Վ. Բաբայան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ  
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«30» նոյեմբերի 2016 թվականի N 38 -Ն

**ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ, 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ**

**ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 55-րդ հոդվածով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ, 32-րդ հոդվածներով՝

**Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝**

- Հաստատել Հաղպատ համայնքի 2017 թ-ի բյուջեն:  
ա/ Եկամուտների գծով՝ 26125.4 հազար դրամ  
բ/ Ծախսերի գծով՝ 26125.4 հազար դրամ
- Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների (հատված 1):
- Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման (հատված 2):
- Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման (հատված 3):
- Հաստատել համայնքի բյուջեի միջոցների հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդ) (հատված 4):
- Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները (հատված 5):
- Հաստատել բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման (հատված 6):
- Ծախսերի ֆինանսավորումը կատարել ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

N	Համայնքի ավագանու անդամներ	Կողմ ( )	Դեմ ( )	Ձեռնպահ ( )
1	Ալիխանյան Աշոտ Ս.	<i>[Signature]</i>		
2	Բաբայան Արման Հ.	<i>[Signature]</i>		
3	Բեժանյան Ավետիք Ա.	<i>[Signature]</i>		
4	Մեջլումյան Արթուր Ս.	<i>[Signature]</i>		
5	Վարդայան Վալերի Կ.	<i>[Signature]</i>		

Համայնքի ղեկավար՝ *[Signature]* Վ. Քառոյան



**ՀԱՏՎԱԾ 1**  
**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԸ**

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամեն ը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>		26125,4	26125,4	0,0
1100	<b>1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	7100			X
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	1500,4	1500,4	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		531,3	531,3	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		969,1	969,1	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136			X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		1305,5	1305,5	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145			X
1131	Տեղական տուրքեր	71452	400,0	400,0	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող			0,0	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		0,0		X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0,0		X
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		0,0		X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		0,0		X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		200,0	200,0	X
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար				X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		200,0	200,0	X
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար				X
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար				X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար				X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամեն ը (ս. 5+ս. 6)	այդ թվում`	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1143	ժ) Համայնքի արհիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար				X
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար				X
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար				X
1146	ժգ) Ավտոկայանատեղի համար				X
1147	ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար				X
1148	ժե) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար				X
1149	ժզ) Հայաստանի Հանրապետության համայնքերի անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար				X
1150	ժէ) այլ տեղական տուրքեր				X
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	7146		0,0	X
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր			0,0	X
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված զրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար				X
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար				X
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ	7161		0,0	X
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների			0,0	X
1162	ա) Եկամտահարկ				X
1163	բ) Շահութահարկ				X
1164	գ) Օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները` յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով				X
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ				X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՍՍՇՆՈՐՀՆԵՐ	7300			0,0
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված այլ պետություններից	7311		0,0	X
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված այլ պետությունների տեղական				X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդված ի NN	Ընդամեն ը (ս.5+ս.)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	7312		X	0,0
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական			X	
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7321		0,0	X
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային				X
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	7322		X	0,0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային			X	
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	17511,2	17511,2	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		14355,5	14355,8	X
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ			0,0	X
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի				X
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ				X
1257	գ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ		3155,4	3155,4	X
1258	դ) Այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ				X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7332		X	0,0
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ			X	
1262	բ) Այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ				
1300	3. ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	7400			0,0
1310	3.1 Տոկոսներ	7411		X	0,0
1311	Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված			X	
1320	3.2 Շահաբաժիններ	7412		0,0	X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե մուտքագրվող				X
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	750,0	750,0	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		750,0	750,0	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ				X
